ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մեր Համալսարանը հնի և նորի համալիր գաղափարակիրն է

ՀԱՄԱՏԵՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՎԵՐԱԾՎԵՑ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ

Անցյալ աշնանը, երբ մեր համալսարանում հյուրընկալեցինք Ռոստովի ճարտարապետության և արվեստի ակադեմիայի ամբիոնի վարիչ Լյուդմիլա Կատաշևային, քննարկվեցին համագործակցության մի շարք ծրագրեր: Որոշվեց, որ այդ համագործակցության մեկնարկը պետք է տրվի համատեղ ցուցահանդեսով:

Մայիսի 24-ին, արդեն Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում, իսկ մեկ ամիս առաջ՝ նաև Ռոստովի ճարտարապետության և արվեստի ակադեմիայում բացվեց 2-րդ կուրսի ուսանողների նախագծերի առաջին միջազգային ցուցահանդես-մրցույթը: Ցուցահանդեսին մեր համալսարանից և Ռոստովի ակադեմիայից ներկայացված էին 23-ական՝ անհատական տան նախագծեր:

Լավագույն աշխատանքները կխրախուսվեն պատվոգրերով մեր համալսարանի և Ռոստովի ակադեմիայի հանձնաժողովների անդամների կողմից:

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐՈՍՆԵՐԸ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ճարտարապետներն ու դիզայներները կոչվեցին՝ այլևս մագիստրոսներ:

Ուսումնական 6 տարվա քրտնաջան աշխատանքից, լսարաններում ու միջանցքներում նախագծերի շուրջ բուռն քննարկումներից հետո, 41 ճարտարապետ և 14 դիզայներ փայլուն կերպով պաշտպանեցին դիպլոմային աշխատանքները՝ արժանանալով բարձր գնահատականների և գովեստի խոսքերի:

Հատկանշական է նաև, որ գերազանց պաշտպանած ճարտարապետների թվում էին նաև 2 իրանցի ուսանող:

ՌԱՏԳԵՐՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Ճարտարապետության և շինարարության Հայասանի ազգային համալսարանի, ԱՄՆ Նյու Ջերսիի Ռատգերսի համալսարանի և Հայ օգնության ֆոնդի միջև եռակողմ համագործակցությունը բազմիցս է արձանագրել իր արդյունավետությունը: Այդ համագործակցության շրջանակներում անցկացվել են մի շարք համատեղ դասընթացներ, դասախոսություններ ու ծրագրեր:

Մայիսի 29-ից հունիսի 4-ը կրկին մեր համալսարանում էին հյուրընկալվել Ռատգերսի համալսարանի պրոֆեսորներ Վահան Թանալը և Դավիթ Միքայելյանը՝ ծանոթանալու Շինարարություն մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրում «Շինարարական նախագծերի կառավարում» դասընթացի ներդրման ընթացքին: Դասընթացը մշակել և վարում էին Ռատգերսի համալսարանի «Շինարարական նախագծերի կառավարում» դասընթացի դասավանդման հավաստագրեր ստացած՝ մեր համալսարանի դասախոսներ Մարինե Ղազարյանը, Վարազդատ Հովհաննիսյանը, Իրինա Վանյանը և Գոհար Ավետիսյանը: Նշենք, որ դասընթացը նախատեսված էր Շինարարության ֆակուլտետի բակալավրիատի չորրորդ կուրսի և մագիստրատուրայի ուսանողների համար:



Ռատգերսի համալսարանի պրոֆեսորներ Դավիթ Միքայելյանի, Վահան Թանալի ինչպես նաև մեր համալսարանի Շինարարության ֆակուլտետի դեկան Դավիթ Գրիգորյանի ներկայությամբ՝ դասընթացի 25 մասնակիցները, կազմելով 6 փոքր խմբեր, մշակեցին և ներկայացրեցին առանձին նախագծերի հայեցակարգային փաստաթղթեր: Վերջինների պաշտպանությունը տեղի ունեցավ հունիսի 4-ին: Ուսանողների խնդրանքով՝ պրոֆեսորներ Դավիթ Միքայելյանը և Վահան Թանալը հանդես եկան "Թունելների կառուցման տեխնոլոգիա և կառավարում" դասախոսությամբ:

Հարկ է նշել, որ այցի ընթացքում ամերիկյան պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաև ռեկտոր Գագիկ Գալստյանի հետ՝ համալսարանի ադմինիստրատիվ

ղեկավարների և հավաստագրեր ստացած դասախոսների մասնակցությամբ: Քննարկվեցին դասընթացի ներդրման հետ կապված հարցեր:

«Շինարարական նախագծերի կառավարում» դասընթացն այսքանով, սակայն, չամփոփվեց: Մասնակիցներին մասնակցության հավաստագրեր կտրվեն հոկտեմբեր ամսին, երբ Ռատգերս համալսարանի պատվիրակությունը կրկին կժամանի Հայաստան ու կայցելի Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան:

Դասընթացը մշակեցին և վարեցին ՃՇՀԱՀ-ում 2016-2017 թ.թ. Ռադգերսի համալսարանի կողմից վերապատրաստված և 2017 թ. հոկտեմբերի 10-ին «Շինարարական նախագծերի կառավարում» դասընթացը դասավանդելու թույլտվություն և համապատասխան հավաստագիր ստացած դասախոսներ Մ.Ղազարյանը, Վ.Հովհաննիսյանը, Ի.Վանյանը, Գ.Ավետիսյանը:

Ռատգերսի համալսարանի, Հայ օգնության ֆոնդի և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջև համագործակցության շրջանակում 2018 թ. մայիսի 29-ից հունիսի 4-ը համալսարանում են հյուրընկալվել պրոֆեսորներ Վահան Թանալը և Դավիթ Միքայելյանը՝ ծանոթանալու "Շինարարություն" մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրում "Շինարարական նախագծերի կառավարում" դասընթացի ներդրման ընթացքին: Դասավանդումն իրականացվում է Ռատգերսի համալսարանի "Շինարարական նախագծերի կառավարում" դասընթացի դասավանդման հավաստագրեր ստացած 4 դասախոսների՝ Մարինե Ղազարյանի, Վարազդատ Հովհաննիսյանի, Իրինա Վանյանի և Գոհար Ավետիսյանի կողմից:

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿՈՐՈՒՆԻԱՅՈՒՄ ԱՐԺԱՆԱՑԱՎ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ

Մարտի 4-10-ը Գերմանիայի Ռեգենսբուրգի կիրառական գիտությունների համալսարանում անցկացվեց էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացվող Յակոբուս + 23-րդ ամենամյա ուսանողական նախագծային շաբաթը:

Աշխատանքային շաբաթին Իսպանիայի Կորունիայի, Գերմանիայի Ռեգենսբուրգի համալսարանների և Ֆրանսիայի Կլերմոն-Ֆերրանի բարձրագույն ճարտարապետական դպրոցի հետ համատեղ մասնակցում էին նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողները: 58 ուսանողի համար քննարկման թեմա էր արդյունաբերական և պատմական հուշարձան համարվող Ռեգենսբուրգի հացահատիկի շտեմարանի համալիրը, որն ապագայում դադարեցրել էր է իր հիմնական գործունեությունը: Ուսանողների առջև խնդիր էր դրված եղել առաջարկել համալիրի օգտագործման՝ ճարտարապետական և բովանդակային նոր մոտեցումներ:



Ողջ շաբաթվա ընթացքում ուսանողներն այցելել էին տարածք, ծանոթացել առաջադրանքին և տարբեր խմբերով մշակել իրենց առաջարկներն ու հայեցակարգերը:

Աշխատանքային շաբաթվա ավարտից հետո, յուրաքանչյուր ուսանող վերադառնալով իր երկիր, ձեռնամուխ էր եղել նախագծերի մշակմանը, որն իրենից պետք է ներկայացներ բազմաֆունկցիոնալ՝ մշակութային և բիզնես կենտրոններով հագեցած համալիր: Մեր համալսարանի մասնակից 5 ուսանող նույնպես շուրջ 2 ամիս քրտնաջան աշխատում էին՝ ստեղծելու հացահատիկի շտեմարանի վերակառուցման իրենց պատկերացումներով նախագիծն ու մակետը:

Մայիսի 27-ից հունիսի 4-ը Իսպանիայի Կորունիայի համալսարանում տեղի ունեցավ նախագծերի շնորհանդես մրցույթը: Արդյունքում՝ մասնակից յուրաքանչյուր համալսարանից հաղթող ճանաչվեց մեկ նախագիծ:

Մեր համալսարանից մրցույթին ներկայացված էր 2 նախագիծ, որից մեկն արժանացավ հաղթանակի և իր յուրահատուկ մոտեցման շնորհիվ՝ հիացմունքի ու գովեստի խոսքերի:

Քննական շրջանը մեկնարկեց

Լարված ենք, հուզված ենք, պատրաստ ենք…

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻՆ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ Է ԲԵՐԵԼ ԼՈՌՎԱ ՄԱՐԶԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 28-ին, մեր համալսարան էր ժամանել Ֆրանսիայի Տուլոնի համալսարանի պատվիրակությունը՝ վերականգնող ճարտարապետ ժակ Ռիբերի գլխավորությամբ: 5 հոգանոց ֆրանսիական պատվիրակության այցը մեր երկիր և մեր համալսարան ինչպես ճանաչողական, այնպես էլ աշխատանքային ու հեռանկարային է: Պատվիրակությունը հետաքրքրված է Լոռվա մարզի մշակութային ժառանգությամբ և մեր համալսարանի հետ հավանական համագործակցությամբ:

Եռօրյա այցի առաջին օրը պատվիրակությանն ընդունել է ռեկտոր Գագիկ Գալստյանը: Ողջունելով հյուրերին՝ ռեկտորն ընդգծել է մեր և ֆրանսիական համալսարանների միջև սերտ համագործակցությունը և հույս հայտնել Տուլոնի համալսարանի հետ նույնպես մոտ ապագայում փոխգործակցության եզրեր գտնելու վերաբերյալ:

Տուլոնի պատվիրակությունը, մեր համալսարանի Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի վարիչի ժ/պ դոցենտ Էմմա Հարությունյանի, ամբիոնի դասախոսներ Նարեկ Հասրաթյանի, Հասմիկ Մալխասյանի, Ճարտարապետության թեկնածու, պրոֆեսոր Լյուբա Կիրակոսյանի, Հուշարձանների չափագրման և ախտորոշման լաբորատորիայի վարիչ Մարինա Բունիաթյանի և մեր համալսարանի մի քանի շրջանավարտների հետ կազմակերպեցին ընդհանուր քննարկում: Ֆրանսիացի ճարտարապետները ներկայացնում են իրենց համալսարանի գործունեությունը՝ հուշարձանների վերականգնման ոլորտում, իսկ Մարինա Բունիաթյանը՝ մեր համալսարանի Հուշարձանների չափագրման և ախտորոշման լաբորատորիայի կատարած աշխատանքները, մասնավորապես, եռաչափ տեխնոլոգիաների կիրառմամբ հայկական ճարտարապետական նմուշների իրական և վերակազմավորման եռաչափ մոդելների ստեղծման վերաբերյալ:

Հաջորդ օրն արդեն մեր և Տուլոնի համալսարանների պատվիրակությունների այցելեցին Օձուն և Ախթալա, որտեղ տեղում ծանոթացան պատմամշակութային ժառանգությանը և կատարեցին ուսումնասիրման, չափագրման աշխատանքներ:

ԲԱՐԻ ԵՐԹ ՍԻՐԵԼԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆՈՐԱՐԱՐ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԵՑ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Նորարարության և ձեռներեցության աջակցման կենտրոնը նորարարական գաղափարների ստեղծմանն ու զարգացմանը խթանող բաց հարթակ է բոլոր երիտասարդների, ուսանողների և դասախոսների համար: Կենտրոնը հարմարավետ միջավայր է տրամադրում ստարտափերին և նորարար խմբերին

գաղափարների զարգացման համար և աջակցում նորարար գաղափարների ստեղծ-մանը, իրագործմանն ու առևտրայնացմանը:

Դիզայներ Գայանե Հակոբյանը՝ ղեկավար Լիլիթ Ումեդյանի ղեկավարությամբ, իր դիպլոմային աշխատանքը՝ «Bask cleaner» սարքը, ներկայացրեց Նորարարության և ձեռներեցության աջակցման կենտրոն, և վերջինիս աջակցությամբ կազմավորեց թիմ՝ ներառելով ուսանողներ՝ ծրագրավորող Հենրիկ Սերգոյանին և տնտեսագետ Տաթև Դանիելյանին:



«Bask cleaner» սարքի հիմնական գործառույթը հանդիսանում է ջրային ավազանների մակերևույթին լողացող աղբի հավաքումը: Սարքի արտաքին տեսքը նմանեցված է հսկա շնաձկան բերանի կառուցվածքին: Կողային հատվածներում կան ճեղքեր, որոնք կատարում են նույն ֆունկցիան, ինչ շնաձկան խռիկային ճեղքերը՝ ապահովելով մաքուր ջրի ելքը սարքի միջից: Սարքի առանձնահատկություններից է նաև այն, որ աշխատում է բացառապես արևի էներգիայով:

Նախագիծը հունիսի 30-ից հուլիսի 1-ը մասնակցեց UNDP անտառային և դաշտային հրդեհների կառավարման ծրագրի, UNDP Իմփաքթէյմ աքսելերատորի և Նորարարական լուծումների ու տեխնոլոգիաների կենտրոնի հետ համատեղ

կազմակերպված Climate Tech Հաքաթոնին: Այն Հայաստանում իր տեսակի մեջ առաջին հաքաթոնն էր, որն ուղղված էր կլիմայի փոփոխության հետևանքով անտառային և գյուղատնտեսական ոլորտներում առկա մարտահրավերներին դիմակայելու նորարարական լուծումների ստեղծմանը:

Հաքատոնին աշխատանքներ էին ներկայացված 3 անվանակարգերում՝ «Լավագույն լուծում անտառային տնտեսության համար», «Լավագույն լուծում գյուղատնտեսության համար» և «Ամենանորարական գաղափար»:

Մեր համալսարանի թիմի «Bask cleaner» ստարտափը հաղթող ճանաչվեց «Ամենանորարական գաղափար» անվանակարգում՝ արժանանալով դրամական պարգևի:

ԼՈՂԱՓՆՅԱ ՎՈԼԵՅԲՈԼՈՒՄ ՃԾՀԱՀ-Ի ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի հուլիսի 4-6-ը «Գրանդ Սպորտ» մարզահամալիրում տեղի ունեցավ ՀՀ 2018թ. լողափնյա վոլեյբոլի տղամարդկանց և կանանց առաջնությունները: Մեր համալսարանը առաջին անգամ էր մասնակցում այս մրցաշարին Անդրէ Սիմոնի և Թելման Կարապետյան զույգով:

Մեր թիմը բավականին լավ հանդես եկավ այս մրցաշարում՝ հասնելով մինչև եզրափակիչ: Եզրափակիչում մեր տղաները լարված պայքարում պարտվեցին ՀՀ տղաների հավաքականը ներկայացնող տղաներին:

Շնորհավորում ենք մեր թիմին և մեր բուհին այս հաջողության կապակցությամբ՝ հետագայում ցանկանալով նորանոր հաղթանակներ:

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՖՀԳ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ֆրանսախոս ուսանողների յոթերորդ փառատոնը՝ «Տարբեր ենք, բայց միասին» խորագրով, այս տարի անցկացվեց Երևանում: Այս տարի համընդհանուր հաղորդակցման լեզուն համախմբել էր 53 ուսանող ֆրանսախոս ուսանողների, որոնք ժամանել էին 17 երկրից՝ Ալբանիայից, Բոսնիա-Հերցոգովինայից, Բուլղարիայից, Թուրքիայից, Լիտվայից, Խորվաթիայից, Հայաստանից, Հունգարիայից, Ղազախստանից, Մակեդոնիայից, Մոլդովայի Հանրապետությունից, Ռումինիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Սերբիայից, Սլովակիայից, Վրաստանից, Ուկրաինայից:

Երևանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի XVII գագաթաժողովի շրջանակներում՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության շրջանային տնօրինությունը ցանկություն էր հայտնել իր աշխատակազմի տարեկան ժողովը կազմակերպել Երևանում, մասնավորապես, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում:

Եվ, հաշվի առնելով մեր և ֆրանսիական մի շարք համալսարանների հետ համագործակցային կապը, ֆրանկոֆոն միջոցառումների իրականացման նկատմամբ մեր հետաքրքրությունը և մեր համալսարանի Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության ակադեմիական նվաճումների կենտրոնի ակտիվ գործունեությունը՝ հուլիսի 6-ին, համալսարանում կայացավ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության աշխատակազմի տարեկան

ժողովը: Հավաքին մասնակցում էին Հայաստանից, Ալբանիայից, Բուլղարիայից, Վրաստանից, Մոլդովայի Հանրապետությունից և Ռումինիայից ժամանած 22 գործընկերներ:

Մինչև ժողովի մեկնարկը՝ մեր համալսարան ժամանած պատվիրակությանն ընդունեց ռեկտոր Գագիկ Գալստյանը: Ռեկտորը ողջունեց հյուրերին և հայ-ֆրանսիական կրթական ու մշակութային կապերի ամրապնդման տեսանկյունից կարևորեց մեր մայրաքաղաքում անցկացված փառատոնը, ինչպես նաև 22 երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ համաժողովը: Գագիկ Գալստյանը ներկա գտնվեց նաև ժողովի բացման արարողությանը և հաջողություն մաղթեց մասնակիցներին:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Պարոն Գագիկ Գալստյանին

Պարո՛ն Ռեկտոր

Ամենայն անկեղծությամբ խորին շնորհակալությունս եմ հայտնում Ձեր համալսարանի կողմից պատրաստակամության դրսևորման և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ֆրանկոֆոն ուսանողների փառատոնի, աշխատակազմի հանդիպման կազմակերպման գործում համագործակցության համար: Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովին ընդառաջ սա ուսանողական 7-րդ փառատոնն էր՝ «Տարբեր միասին» խորագրով:

AUF

Europe centrale et orientale
1, Boulevard Schitu Magureanu - Mezzanine 050025 Bucarest - Roumanie
Tél : +40 21 312 12 76 - Tcp : +40 21 312 16 66
Courriel : europe-centrale-orientale@auf.org - Site : http://europe-centrale.auf.org

Bucarest, le 18 juillet 2018
CE/091/MA/2018

M. Gagik GALSTYAN
Recteur
Université Nationale d'Architecture et de Construction d'Arménie

Monsieur le Recteur,

Je tiens à vous remercier bien sincèrement pour la disponibilité et la collaboration de votre université dans l'organisation du Festival des étudiants francophones d'Europe centrale et orientale et dans celle du regroupement du personnel de l'Agence universitaire de la Francophonie en Europe centrale et orientale. C'était la septième édition du Festival organisé en marge du Sommet de la Francophonie et ayant comme thème « Divers ensemble ».

Le succès de cette édition est dû à l'implication active de votre université et de vos collaborateurs. Grâce à l'engagement et au soutien de votre université, le regroupement de l'ensemble de la DRECO a pu se dérouler dans les meilleures conditions.

J'ai été tout particulièrement touché par l'implication et les efforts de vos collaborateurs pour mettre à notre disposition toutes les ressources nécessaires, ainsi que par leur participation active.

Vous renouvelant mes remerciements pour l'implication de votre université dans la réussite du Festival et du regroupement annuel de l'AUF en ECO, je vous prie d'agréer, Monsieur le Recteur, mes salutations distinguées.

Bien amicalement,

EUROPE CENTRALE ET ORIENTALE AUF

Mohamed Ketata
Directeur régional
Agence universitaire de la Francophonie
en Europe centrale et orientale

AGENCE UNIVERSITAIRE DE LA FRANCOPHONIE

Antananarivo Beyrouth Bruxelles Bucarest Dakar Hanoi Montréal Paris Port-au-Prince Rabat Yaoundé

Այս փառատոնի հաջողությունը Ձեր համալսարանի և Ձեր աշխատակիցների ակտիվ ներգրավվածության և աջակցության շնորհիվ էր: Ձեր համալսարանի շնորհիվ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային աշխատաժողովն անցկացվեց լավագույն պայմաններում:

Մասնավորապես զգացված եմ Ձեր աշխատակիցների պատրաստակամության և ներդրած ջանքերի, մեզ անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելու, ինչպես նաև ակտիվ մասնակցության համար:

Եվս մեկ անգամ շնորհակալություն հայտնելով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ուսանողական փառատոնի և աշխատաժողովի հաջողությանը նպաստելու համար՝ խնդրում եմ ընդունել, պարոն Ռեկտոր, առանձնահատուկ ողջույններս:

Հարգանքով՝ Մուհամեդ Կետատա
Տարածաշրջանային տնօրեն
Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում
Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալություն

Բուխարեստ, 18 հուլիսի 2018թ.

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆՔ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻՆ

Այս տարվա փետրվարին էր, երբ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի պատվիրակությունը, «Հրանտ Դինք» հիմնադրամի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնե հասարակական կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում, մեկնեց Թուրքիա:



Այստեղ պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան «Հրանտ Դինք» հիմնադրամի ներկայացուցիչների, Արքեպիսկոպոս Լևոն Զեքիյանի հետ, այցելեցին պատմական տարածքներ, դպրոցներ, թանգարաններ, Ստամբուլի MEF համալսարան, որտեղ հանդես եկան Ճարտարապետության վերաբերյալ դասախոսություններով:

Առաջին իսկ այցն անպտուղ չէր: Մեր համալսարանի ուսանողները՝ 6 թուրք ուսանողի հետ, նախագծել, ապա՝ իրականացրել էին Ստամբուլի Հայկական եկեղեցու հովանու ներքո գտնվող հայկական մանկապարտեզի խաղահրապարակի նախագիծը:

Հերթական այցը Ստամբուլի MEF համալսարանի հրավերով և «Հրանտ Դինք» հիմնադրամի ֆինանսավորմամբ էր:

Հունիսի 25-ից հուլիսի 13-ը մեր համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետի Ճարտարապետական նախագծման և Ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոնի դասախոսներ Արթուր Եղիկյանը և Գրիգոր Բաբաջանյանը՝ 5 ուսանողի հետ, Ստամբուլում մասնակցեցին ամառային դպրոցի:

Հագեցած աշխատանքային օրերն ամփոփվեցին մեր ուսանողների գործերի հանդեպ հիացական վերաբերմունքով և հավաստագրերով:

ՊԵԿԻՆՅԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ ՏՊԱՎՈՐԻՉ ԷՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ

Հուլիսի 14-28-ը՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետի 4 ուսանող՝ 3 շինարար ու 1 ճարտարապետ, դեկանի տեղակալ, դասախոս Արմեն Շատվորյանի ղեկավարությամբ մեկնել էին Չինաստան՝ մասնակցելու Պեկինի Ճարտարապետական և շինարարական համալսարանի կազմակերպած BUCEA միջազգային ամառային դպրոցին, որին մասնակից էին նաև պատվիրակություններ Մեծ Բրիտանիայից և Բուլղարիայից:



Երկշաբաթյա հավաքի ընթացքում ուսանողների առօրյան հագեցած և բազմազբաղ էր ամենօրյա տարբեր թեմաների դասընթացներով և դասախոսություններով, ինչպես նաև ճանաչողական էքսկուրսիաներով: Մեր կողմից ևս Արմեն Շատվորյանը հանդես է եկել դասախոսություններով՝ «Ճարտարապետական մակետաշինություն», «բազմաչափ ճարտարապետություն» թեմաներով, ինչպես նաև ներկայացրել էր Հայաստանը, հայկական ճարտարապետության առանձնահատկությունները և մեր համալսարանի ծավալած գործունեությունը:

Մեր համալսարանի պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Պեկինի համալսարանի Ճարտարապետական և շինարարական ֆակուլտետների ադմինիստրատիվ և դասախոսական կազմի, ինչպես նաև համալսարանի ղեկավարության հետ քննարկելով հետագա համագործակցության, փոխադարձ այցելությունների վերաբերյալ հեռանկարային հարցերը:

ՄԵՐ ԵՎ ԳԵՈՐԳ ՕԳՈՒՍՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻՆ ՄԻԱՎՈՐԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐԵ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական ճարտարապետությունն՝ այս անգամ գերմանացի պրոֆեսորների հետաքրքրության առարկա:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան են ժամանել Գեոտինգենի Գեորգ Օգուստ համալսարանի պրոֆեսոր, դոկտոր Զիգֆրիդ Զիգեսմունդը, դոկտոր Վիդեքինդը և ասպիրանտ Քրիստոֆեր Փեոթցլը:

Մեր և Գեորգ Օգուստ համալսարաններիի միջև համագործակցությամբ մեկնարկեց «Հայաստանի պատմական քարե ճարտարապետության պահպանումը» ծրագիրը:

Ծրագրի շրջանակում կկազմակերպվի 3 ամառային դպրոց, որի նպատակն է մշակութային ժառանգության քարե օբյեկտների դաշտային և լաբորատոր ուսումնասիրության միջոցով նպաստել ուսանողների և երիտասարդ գիտնականների պրակտիկ հմտությունների զարգացմանը:

Գերմանիայի պատվիրակությանը ողջունեց և աշխատանքային ու համագործակցային բեղմնավոր ընթացք մաղթեց ռեկտոր Գագիկ Գալստյանը, որից հետո վերջիններս շրջայց կատարեցին մեր համալսարանում, ծանոթացան լաբորատորիաներին և արվեստանոցներին:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան